ՇԵՂՎԱԾ ՀԱԲԻՏՈՒՍԸ
(Թոմաս Մանի օրինակը)

ՏԻԳՐԱՆ ՍԻՄՅԱՆ

Այս հոդվածում մենք կփորձենք նկարագրել 1910-ական թթ. հակապացիֆիստական խոսույթը (դիսկուրս): Այս ինտելեկտուալ «բանակի» խոշորագույն ներկայացուցիչներից էին փիլիսոփա, սոցիոլոգ Մաքս Շելերը (1874-1928), տնտեսագետ, սոցիոլոգ Վերներ Զոմբարտը (1863-1941) և, իհարկե, գրող Թոմաս Մանը (1875-1955):

Եթե Ռոլան-Հաուփթման, Բերգսոն-Հաուփթման արժեքաբանական պայքարը ծավալվում է արևմտյան քաղաքակրթության (Ֆրանսիա) և գերմանական ռազմականության համատեքստում[1], ապա Զոմբարտը իր հարվածը ուղղում է «արևմտյան քաղաքակրթության»[2] «առևտրականներին»՝ անգլիացիներին:

Գերմանական գաղափարական պայքարը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ոչ թե երկբևեռ էր (Ֆրանսիա, Անգլիա), այլ եռաբևեռ. երրորդը Ռուսաստանն էր: Կայզերական Գերմանիան պայքարում էր «ռուսական դեսպոտիզմի» և «ասիականության» (азиатчина) դեմ [3]:

Համառոտ նշենք, որ Մաքս Շելերը իր հիմնական դրույթները շարադրել է «Պատերազմի հանճարը» (1915) հոդվածում, իսկ Վերներ Զոմբարտը՝ «Առևտրականները և հերոսները. հայրենասերի մտորումները» (Händ–ler und Helden. Patriotische Besinnungen, 1915) գրքում:

Ցավալի պատճառով ներկայացնելու ենք միայն Թոմաս Մանի երկերի հիման վրա, որոնցում հեղինակի ամբողջ ինտելեկտուալ ներուժն է դրված՝ կայզերական քաղաքականությունը օրինականացնելու և Գերմանիայի՝ պատերազմին մասնակցելու իրավացիությունը հիմնավորելու համար:

Թ. Մանը՝ իբրև ժամանակավորապես շեղված ու վերականգնված հաբիտուսի օրինակ

Դժվար է պատկերացնել 20-րդ դարի առաջին կեսի գերմանական գրականության ընթացքը առանց Թոմաս Մանի: Հայտնի է, որ նա 1920-ա-

---

[1] Այս մասին մանրամասն տե՛ս **Տիգրան Սիմյան,** Ինտելեկտուալի հաբիտուսը պատերազմի համատեքստում // Վեմ. Համահայկական հանդես, 2014, № 1, էջ 183-201 / http://vemjournal.org/?p=1772-20.06.2014:

[2] **Sombart, Werner**. Händler und Helden. Patriotische Besinnungen. München: Duncker & Humblot 1915, s. 124. Ռուսերեն թարգմանությունը տե՛ս **Зомбарт В**. Собрание сочинений в 3-х томах. Т. 2. СПб., 2005:

[3] Տե՛ս **Руткевич А. М**. Вернер Зомбарт – историк капитализма // **Зомбарт В**. Собрание сочинений в 3-х томах. Т. 1, с. 15–16:

կաններին քաղաքական «կերպարանափոխություններ» է վերապրել: Նրա գերմանական ազգայնականության ջատագովությունը հարազատ եղբոր՝ Հայնրիխ Մանի հետ երկար տարիներ (1915-1922) գժտության հիմք է դառնում[4]: Թ. Մանը երես է թեքում իր եղբորից՝ «Զոլա» (1915) հոդվածում իր հասցեին արված քննադատության պատճառով, որն ընկալում է իբրև անձնական վիրավորանք: Թ. Մանը «Ապաքաղաքական անձի մտորումները» (Betrachtungen eines Unpolitischen, 1918) հրապարակախոսական գրքում եղբայրների «ինտիմ կոնֆլիկտը» դուրս է բերում հասարակական հարթություն՝ գտնելով, որ այն ունի «սիմվոլիկ արժեք» (symbolische Würde), ուստի կարող է «հանրայնացվել» և չվերածվել վիրավորանքի[5]:

Թ. Մանը ոչ բացահայտ վիճում է Հ. Մանի հետ. «Ես ժամանակի ասպետը չեմ, ես ոչ «առաջնորդ եմ», ոչ էլ ուզում եմ լինել: Ես չեմ սիրում «առաջնորդներին» և չեմ սիրում նաև «ուսուցիչներին», օրինակ՝ «ժողովրդավարության ուսուցիչներին»»[6]: Իսկ «ժողովրդավարության ուսուցիչ» ասելով՝ Թ. Մանը նկատի ուներ իր հարազատ եղբորը:

Նախքան բուն մեր նպատակին անցնելը ուզում ենք նշել, որ նրա հակապացիֆիստական գաղափարները դրսևորվել են «Մտորումներ պատերազմի մասին» (Gedanke im Kriege, 1914, նոյեմբեր), «Ֆրիդրիխը և մեծ դաշինքը» (Friedrich und die große Koalition, 1915, հունվար/փետրվար), «Համաշխարհային խաղաղությո՞ւն» (Weltfrieden?, 1917, դեկտեմբեր) հոդվածներում[7]: Քաղաքական արժեքաբանական ոգորումների առումով առանձնապես հետաքրքիր է, էրնստ Բերտրամի և Պաուլ Ամանի հետ 1910-ականներին Թ. Մանի նամակագրությունը, որը շրջանառության մեջ է դրվում 1959/60 թվականներից[8]:

Ի՞նչ արժեքներ էր դավանում Թ. Մանը իր «Ապաքաղաքական անձի մտորումները» երկում, որի հիման վրա ուզում ենք առանձնացնել հետևյալ հիմնական դրույթները:

Թ. Մանը իր «Նախաբան»-ում 19-րդ դարը հակադրում է 20-րդին: Ըստ նրա՝ 19-րդը «տղամարդկային» դար էր, որի հիմնական բաղադրիչներն էին՝ «ռոմանտիզմը», «ազգայնականությունը», «բյուրգերականությունը», երաժշտությունը (Վագներ), հոռետեսությունը (Շոպենհաուեր, Նիցշե), հումորը, որոնք «ընդհանուր գծերով կազմում են իմ հոգևոր կեցության անանձնական, վերանձնական բաղադրիչները»[9]: Բացի այդ՝ 19-րդ դարը «անամոթության և ռենեսանսի գեղագիտականացման, ... ուժի հիստերիկ պաշտամունքի, գեղեցկության, կյանքի» փուլն էր: 19-րդ դարի արժեքաբանությանը հակադրում է 20-րդ դարի միտումները, որում տեղ

---

[4] Այս մասին մանրամասն տե՛ս **Манн, Генрих**. В защиту культуры. Сборник статей, М., 1986, с. 33-36, **Манн Т**. Письма. М., 1975, էջ 19-20:

[5] Տե՛ս **Mann, Thomas**. Betrachtungen eines Unpolitischen (Hrsg. Peter de Mendelssohn). Fr. am Main: S.Fischer Verlag 1983, էջ 19:

[6] Նույն տեղում, էջ 21:

[7] Տե՛ս **Mann, Thomas**. Von Deutscher Republik, Fr. am Main: S. Fischer Verlag, 1984, էջ 7-25, 28-88, 97-101, 109-112:

[8] **Mann, Thomas**. Briefe an Paul Amann (Hrsg. von Herbert Wegener). Lübeck: Schmidt-Römling 1959. **Mann,** Thomas. Briefe an Ernst Bertram (Hrsg. von Inge Jens), Pfullingen: Neske 1960.

[9] **Mann, Thomas**. Betrachtungen eines Unpolitischen, s. 22.

են գտնում 18-րդ դարի Լուսավորության շրջանի կենտրոնական գաղափարները՝ «սերը», «ոգին», «ժողովրդավարությունը»[10]: Այս երկու դարերը, գտնում է նա, ի հակադրություն 19-րդ դարի, «կանացի» են, ընդ որում՝ 18-րդ դարը «մակերեսային», «փափուկ», «մարդու մասին» երազող: Երիտասարդ հարյուրամյակը՝ 20-րդ դարը, «նմանակում է 18-րդ դարին՝ իր ոչ անմիջական նախորդին»: 20-րդ դարի մարդը «ո՛չ հոռետես է, ո՛չ կասկածամիտ, ո՛չ ցինիկ և ո՛չ էլ հեգնող»[11]: Բանականությունը դառնում է «երջանկության» հասնելու միջոց, իսկ սիրտը՝ «սիրո» և «ժողովրդավարության»[12]: Կենտրոնական արժեք է դառնում «իդեալի իշխանությունը», որի կարևորագույն բաղադրիչներն են՝ ակտիվիզմը, վոլյունտարիզմը, մելիորիզմը, ապաքաղաքականացվածությունը, քաղաքականացվածությունը, էքսպրեսիոնիզմը[13]: 20-րդ դարի արժեքաբանության մեջ չի խոսվում «հեգելյան «պետության», շոպենհաուերյան կամքի մերժման մասին: Դրան հակառակ՝ կենտրոնական հասկացություն է դառնում «մարդկությունը». «ոգին դառնում է կամք և երկրի վրա կերտում դրախտ»[14]: Հետաքրքրական է, որ այս հակադրության մասին 1928 թ. գրել է նաև Կ. Գ. Յունգը՝ գտնելով, որ «ժամանակի ոգին» դրսևորվում է ինտերնացիոնալիզմի և սուպերնացիոնալիզմի միջոցով[15]:

Թ. Մանը 19-րդ և 20-րդ (նաև 18-րդ) դարերի տարբերության հատկանիշ է նշում գրականության կոչվածության (անգաժավորվածության) փաստը, այլ խոսքով ասած՝ գրական դաշտը դառնում է հասարակության մեջ դեմոկրատական արժեքներ սերմանելու միջոց (ուղղակի ու անուղղակի կերպով): «Արվեստը, - գրում է Թ. Մանը, - դառնում է սոցիալական ու քաղաքական բարեփոխումների քարոզչության միջոց»[16]: Նույն շրջադարձը մենք տեսնում ենք նաև 1920-30-ական թթ. Գերմանիայում[17]: 1933-ից հետո նացիստական քարոզչամեքենան փոխում է իր քարոզչության «ալիքը»: Նացիստները (Հիտլեր, Գյոբելս, Գյորինգ) հաղորդակցության ալիք են ընտրում ռադիոն: Ումբերտ էկոն այս առիթով շատ դիպուկ նկատում է. «Զանգվածային լրատվական միջոցներից հաղթում է գրքային հաղորդակցությունը… մարգարեական գաղափար»[18]: Ավելացնենք, որ ռադիոյին կից (լսողական ալիք) նացիստական քարոզչության միջոցներից էր նաև կինոն (տեսողական ալիք):

Եթե ի մի բերելու լինենք Թ. Մանի՝ վերը շարադրված գաղափարները, ապա կարող ենք եզրակացնել, որ նրա հաբիտուսի նման դրսևորումը

---

[10] Նույն տեղում, էջ 26:

[11] Նույն տեղում:

[12] Նույն տեղում, էջ 26-27:

[13] Տե՛ս նույն տեղը, էջ 27:

[14] Նույն տեղում, էջ 27:

[15] Տե՛ս **Юнг К. Г**. Проблема души современного человека // http://jungland.ru/node/1620-26.06.2014:

[16] **Mann, Thomas**. Betrachtungen eines Unpolitischen, s. 27.

[17] Այս մասին մանրամասն տե՛ս **Տիգրան Սիմյան,** Գերմանիայում պատերազմական -հակապատերազմական դիսկուրսը. Առաջին համաշխարհային պատերազմի արժևորումը // Հայկական բանակ, 2011, № 3 (69), էջ 107-117 / http://razmavaraget.files.wordpress.com/2012/01/n3_2011-final.pdf - 26.06.2014

[18] **Карьер Ж. К., Эко У**. Не надейтесь избавиться от книг! СПб., 2010, с. 221.

(օր.՝ գժտություն հարազատ եղբոր հետ), գաղափարական դիրքորոշումը պայմանավորված էին «գերմանականություն», «ազգայնականություն» հասկացությունների ընկալման տարբերությամբ: Այս արժեքների «թշնամիներն» էին 18-րդ դարում ձևավորված ֆրանսիական ժողովրդավարության կերտման հիմնարար գաղափարները՝ եղբայրություն, հավասարություն, ազատություն: Հենց այս արժեքների կրողներին էր Թ. Մանը համարում Գերմանիայի թշնամի[19]:

Հետաքրքրական է, որ հենց 18-րդ և 19-րդ դարերի արժեքաբանական հակադրության համատեքստում էր Թ. Մանը մտադրվել գովերգել Պրուսիան, գրել մի վեպ Վիլհելմ Երկրորդի մասին: Այս մտահղացումը Թ. Մանը չի իրականացնում, իսկ Հ. Մանը դիմում է պատմական նյութին և գրում երկու վեպ ֆրանսիացի հումանիստ թագավոր Հայնրիխ IV-ի մասին («Հայնրիխ IV-ի երիտասարդության տարիները» (1935), «Հայնրիխ IV-ի հասունության տարիները» (1938)): Այս խոսույթի մեջ է տեղավորվում Թ. Մանի՝ 1939 թ. գրած «Լոտտեն Վայմարում» (Lotte in Weimar, 1939) վեպը:

«Նախաբան»-ում Թ. Մանը ուրվագծում է Գերմանիա - Արևմուտք հակադրությունը, ինչը կարելի է թարգմանել նաև «մենք» (Գերմանիա)-«նրանք» (Արևմուտք, հատկապես՝ Ֆրանսիա) հակադրության միջոցով[20]: Հետաքրքրական է, որ 1910-ական թթ. գերմանական հասարակության մեջ տարածված էր այն կարծիքը, որ Առաջին համաշխարհային պատերազմը հրահրում է Արևմուտքը: Այս հակադիր ուժերի պայքարը Թ. Մանը ներկայացնում է օրգանիզմ-կազմակերպություն հակադրության միջոցով: Իրականում սա հերյուրանք է: Գերմանիան ինքնին կազմակերպված տնտեսություն, արդյունաբերություն ունեցող երկիր էր: Այս առումով համարում ենք լավ փաստարկված Բորիս Պարոմոնովի այն նկատառումը, որ «1914 թ. Գերմանիան ինքն է հանդես գալիս պողպատե կազմակերպվածությամբ, ռացիոնալ հաշվարկով, համակարգված պլանավորվածությամբ»[21]:

Հիմնավորված է Բ. Պարոմոնովի այն դիտարկումը, թե Թ. Մանը իրավացի է ռոմանական մշակույթի մասին խոսելիս և «սխալ այնտեղ, որտեղ խոսում է հենց Գերմանիայի մասին»[22]: Բերենք գերմանականության մասին Թ. Մանի մտացածին, չհիմնավորված դատողություններից մի քանիսը: Այս նույն «Նախաբան»-ում նա նշում է. որ «Մենք՝ գերմանացիներս, հասարակական ժողովուրդ չենք: ... Ես և աշխարհը. սրանք են մեր մտածողության ու ստեղծագործության օբյեկտները և ոչ թե այն դերը, որ Ես-ը տեսնում է իրեն հասարակության մեջ, մաթեմատիկական-ռացիոնալ հասարակական աշխարհում»[23] (Gesellschaftswelt): Կամ՝ «...եվրոպական կամ համաշխարհային ժողովրդավարությանը ազգային ժողովրդավարությունների միաձուլման դեպքում գերմանական էությունից հետք անգամ չի

[19] Տե՛ս **Mann,** Thomas. Betrachtungen eines Unpolitischen, էջ 32:

[20] Այս հակամարտության մասին մանրամասն տե՛ս **Хряков А**. Казус Germania: немецкие историки и психология „особого пути“ (часть 4-я) / "НЛО", 2009, № 100 / http://magazines.russ.ru/nlo/2009/100/ch24.html -26.06.2014:

[21] **Паромонов Б**. Шедевр германского “славянофильства” (О “Размышлениях аполитичного” Томаса Манна) // "Звезда", 1990, № 12 с. 156: Այս գաղափարները խորթ չէին գերմանական հասարակական որոշ շերտերի կարծիքին:

[22] Նույն տեղում, էջ 152-153:

[23] **Mann, Thomas**. Betrachtungen eines Unpolitischen, s. 35.

մնա»[24]: Ինչպես տեսնում ենք, Թ. Մանի այս դատողությունները տարաժամանակյա կտրվածքում հոդս ցնդեցին: Այս մեծամտությունը հաղթահարվում է միայն 1945 թ. հետո՝ Գերմանիայի «դաստիարակման» (Entnazifizierung) շնորհիվ:

Թե ինչպես է Թ. Մանը սահմանազատում գերմանականության (Deutschtum) արժեքները Արևմուտքից:

Նույն «Նախաբան»-ի հիման վրա կարող ենք առանձնացնել հետևյալ հակադրությունները.

ա. ոգի-քաղաքականություն,

բ. մշակույթ-քաղաքակրթություն,

գ. հոգի-հասարակություն,

դ. ազատություն-համընդհանուր ընտրելու իրավունք,

ե. արվեստ-գրականություն[25],

զ. կոսմոպոլիտիզմ-ինտերնացիոնալիզմ,

է. «գերմանական հոգևոր արժեքների»[26], մարդկայնության, հակաքաղաքականության, բյուրգեր-դեմոկրատ-բուրժուա,

ը. «բազմիցս գովաբանված «չինովնիկական, ոստիկանական պետություն»»-հանրապետություն:

Այս հակադրությունները մտացածին չէին, այլ քաղաքական, մշակութային խնդիրները մեկնաբանելու մետալեզու էին: Օրինակ, եթե Թ. Մանը իր «Մտորումներ պատերազմի մասին» հոդվածում պատերազմող երկրների քաղաքական հակասությունները ներկայացնում էր իբրև պայքար մշակույթի կրողների (գերմանացիներ) և քաղաքակրթության ներկայացուցիչների (ֆրանսիացիներ) միջև, ապա Օսվալդ Շպենգլերը (1880-1936) ևս իր «Արևմուտքի մայրամուտը կամ արևմտյան աշխարհի մայրամուտը» (1918-1922) աշխատության Արևմուտքի մայրամուտը կանխատեսող պատմափիլիսոփայության մեջ դարձյալ օգտագործում է մշակույթ-քաղաքակրթություն մետալեզուն, բայց բոլորովին այլ բովանդային իմաստ է հաղորդում այդ հակադրությանը: Դրանցով փորձում է նկարագրել իր տեսությունը:

Թ. Մանի մատնանշած հակադրությունները հնարավորություն են տալիս նկարագրելու կայզերական Գերմանիայի քաղաքական, հրապարակախոսական մտածելակերպը:

Ռ. Ռոլանը, իր «PRO ARIS» («Խորանների համար», 1914) հոդվածում անդրադառնալով Մանի «Մտորումներ պատերազմի մասին» հոդվածին, քննադատում է նրա այն պնդումները, թե «իսկական պատերազմը պատերազմ է գերմանական մշակույթի քաղաքակրթության դեմ», թե «գերմանական միտքը չուներ ուրիշ իդեալ»՝ բացի միլիտարիզմից»: Եվ այդ ամենի

---

[24] Նույն տեղում, էջ 39:

[25] Այս հակադրությունը հետագայում տեսանելի է դառնում «Դոկտոր Ֆաուստուս» վեպում չնչին փոփոխությամբ՝ արվեստ (երաժշտություն)- գրականություն հակադրությամբ:

[26] Նկատենք, որ «գերմանական հոգևորությունը» լավագույնս արտահայտվում է հատկապես Նիցշեի, Վագների, մայսթերզինգերների և այլոց ստեղծագործություններում:

վկայությունը հետևյալ տողերն են. «Քանզի մարդը թորշոմում է խաղաղության ժամանակ, // Պարապ հանգիստը հերոսության գերեզմանն է. // Օրենքը թույլի ընկերն է, // Նա ամեն ինչ ուզում է հարթեցնել, // Հաճույքով աշխարհը կհավասարեցներ, // Բայց պատերազմը ուժի դրսևորման հնարավորություն է տալիս...»[27]: Թ. Մանը իր «Բողոք» (Der Protest) էսսեում անպատասխան չի թողնում Ռոլանին, որին համեմատում է «ցլամարտիկի սրի վրա գլուխը կախ գցած վազող ցլի» հետ: Գերմանիայի հասցեին Ռոլանի նշած բոլոր մեղադրանքները Թ. Մանը «ընկալում է իբրև գերմանական փառքի տիտղոսներ, և ոչ թե Գերմանիայի թշնամիներին (գաղափարական) զենքի փոխանցում»[28]: Այս համեմատությունը խոսում է գաղափարական պայքարի մեջ Թ.Մանի զգացապես լիովին կլանված լինելու մասին, և դեռևս բացակայում է արտադիրքավորվածությունը:

Կայզերական Գերմանիայի և Երրորդ ռայխի ռազմամոլական տրամաբանությունը փորձում է բացատրել ռուս փիլիսոփա Վլադիմիր Էռնը[29] իր «Կանտից Կրուպին» (1914) հոդվածում: Նա գրում է, որ «գերմանականության բուռն ապստամբությունը» պատահականություն չէր, այլ օրինաչափություն: Գերմանական ռազմամոլությունը ուներ իր հենքը. այն խարսխված էր գերմանական հոգևոր մշակույթի, փիլիսոփայության վրա: Ըստ նրա՝ գերմանական ռազմամոլության «ոգեշնչողը» Կանտի «Մաքուր բանականության քննադատությունը» (1781) աշխատությունն էր, որտեղ «ներքին և արտաքին փորձը իսկապես կտրվում է նոումենների ցանկացած կապից, այսինքն՝ ճշմարիտ էության աշխարհից», և, ըստ Էռնի, Նիցշեի՝ անախրոնիզմ դարձած՝ Աստծո մահվան ազդարարումից (der alte Gott ist tod) հետո ազատ են արձակվում «գերմանական ձեռքերը այս աշխարհում՝ ուժի և իշխանության, երկրային թագավորությունները ու երկրային հարստությունները տիրելու, մեծագույն երազանքը իրականացնելու համար»[30]:

Էռնը Կանտին մեղադրում է, որ վերջինս գերմանական ռազմամոլության նախապատրաստողներից մեկն էր, անգամ գերմանական ռազմամոլությունը համարում է «կանտյան ֆենոմենալիզմի բնական զավակը»: Այս մեղադրանքը ամբողջովին անհիմն ենք համարում, քանի որ ռուս փիլիսոփան Կանտի գաղափարները տեղայնացնում է Առաջին համաշխարհային պատերազմի համատեքստում: Կանտը իր աշխատության մեջ իմացաբանական խնդիրներ է քննարկում, փակում է մտացածին (սպեկուլյատիվ) դատողությունների ճանապարհը դեպի փիլիսոփայություն, գիտություն:

---

[27] "Denn der Menscn verkümmert im Frieden, // Müssige Ruh ist das Grab des Muts. // Das Gesetz ist der Freund des Schwachen, // Alles will er nur eben machen, // Möchte gern die Welt verflachen, // Aber der Krieg lässt die Kraft erscheinen…" (**Роллан Р**. Над схваткой // http://www.belousenko.com/books/rolland/rolland_1914-15.htm -26.06.2014)

[28] **Mann, Thomas**. Betrachtungen eines Unpolitischen, s. 46.

[29] 1910-ական թթ. այս հեղինակի դրույթների քննադատության մասին տե՛ս **Дмитриев А**. Мобилизация интеллекта: Международное научное сообщество и Первая мировая война // "Интеллигенция в истории". Образованный человек в социальных представлениях и действительности. М., 2001, с. 196-236 // http://august-1914.over.ru/dmitriev.pdf - 26.06.2014

[30] **Эрн В. Ф**. От Канта к Круппу // "Русская мысль", 1914, № 12, с. 116-124 (2-я пагинация) // http://vladimir-ern.narod.ru/Mech-I-Krest/ERN_Mech-i-Krest-04_Ot-Kanta-k-ruppu.html - 26.02.2014

Իսկ էռնի հոդվածում Կանտի հայացքները քննվում են բարոյականության, քաղաքական խոսույթի համատեքստում: Ռուս փիլիսոփան չափազանցացնում է նաև փիլիսոփայական խոսույթի ազդեցությունը կայզերական Գերմանիայի քաղաքական խոսույթի վրա: Քիչ հավանական է, որ կայզեր Վիլհելմ II-ը իր ռազմատենչ քաղաքականության շարժառիթները կբացատրեր իր իսկ վրա Կանտի թողած բարոյական ազդեցությամբ:

Շարժիչը քաղաքական շահն է, թելադրողը՝ «վերևը». նա է թելադրում մյուս հասարակական դաշտերի (տնտեսական, արդյունաբերական և այլն) գործունեությունը, ուղղվածությունը, տրամաբանությունը:

Նշենք, որ 20-րդ դարի սկզբներին Գերմանիան տնտեսական աճի տեմպերով (հատկապես ռազմական արդյունաբերությամբ)[31] գերազանցում էր Ֆրանսիային, Ռուսաստանին, ԱՄՆ-ին: Նման պայմաններում ռազմաարդյունաբերական տեխնոլոգիաները հիմք են դառնում Գերմանիայի «ուրույն ճանապարհը» (իրականում միֆը) իրականացնելու համար[32]: Սա է պատճառը, որ էռնը ուշադրություն է դարձնում ռազմաարդյունաբերական տեխնոլոգիաների զարգացածության վրա:

Կրուպի արտադրած զրահատեխնիկան, ըստ էռնի, «գերմանական ռազմամոլության ամենաառգեշնչված, ամենաազգային ու ամենաարյունակցական զավակն է», «գերմանական տեխնիկական արդյունաբերության անտարակուսելի բարձունքը», ինչը «գիտնականների, արդյունաբերողների, քաղաքական գործիչների մի քանի սերնդի երկարատև ու համատեղ աշխատանքի» արդյունք է: Էռնի այս փաստարկը լավագույնս ցույց է տալիս, թե ինչպես է քաղաքական դաշտը գերմանական արդյունաբերության նվաճումները ծառայեցնում՝ մտադրված քաղաքականությունը իրականացնելու համար:

Այս խնդրի մասին բոլորովին այլ կարծիք է արտահայտում էրնստ Տրյոլչը. «Մեր (գերմանացիների - Տ. Ս.) հակումը դեպի կարգուկանոն ոչ թե շահ ունենալու, նյութական ու սոցիալական նպատակների հասնելու վրա է հիմնված, այն բխում է պարտքի զգացումի հետ միասին ոգու էության, կարգավորվածության, օրենքի իդեալական պատկերացումներից ինչպես մարդու կյանքում, այնպես էլ աշխարհում: … Այս զգացումը … տիեզերական զգացումի էմանացիա է, որը գիտի աշխարհի հիմքին հարազատ լինելու մասին»[33]: Հատվածից երևում է, որ Տրյոլչի դատողությունները թաքցնում են քաղաքական «վերևի» մտադրությունները: Սա արվում է ազգային բնավորության գծերը և սպեկուլյատիվ դատողությունները շաղախելու ու շահարկելու միջոցով:

Իսկ ի՞նչ էր ուզում «վերևը»:

Իրականում Առաջին աշխարհամարտի նախաշեմին գերմանական քաղաքական էլիտայում (Վիլհելմ II-ի գլխավորությամբ) սկսում է գերիշխել «Ուժը վեր է իրավունքից» (“Macht geht vor Recht”) սկզբունքը[34] և ոչ թե

---

[31] Այս փաստը հաստատում է նաև էրնստ Տրյոլչը (Տե՛ս **Трельч Э**. Метафизический и религиозный дух немецкой культуры // "Логика культуры". Антология. СПб.–М., 2009, с. 229:

[32] Այս խնդիրը լավագույնս նկարագրված է Ալեքսանդր Խրյակովի հոդվածում (տե՛ս **Хряков А**., նշվ. աշխ.:

[33] **Трельч Э**., նշվ. աշխ., էջ 222:

[34] Տե՛ս **Серов В.** Энциклопедический словарь крылатых слов и выражений. М., 2003,

հակառակը (“Recht geht vor Macht”): Նկատենք, որ այս «Ուժը վերը է իրավունքից» ձևակերպման համար Մաքսիմիլիան ֆոն Շվերինը 1863 թ. հունվարի 27-ի իր ելույթում քննադատում է Բիսմարկի վարած «ուժային քաղաքականությունը» (Machtpolitik): Ըստ Բիսմարկի՝ «...պետական ապարատը չէր կարող կանգնել, իրավական կոնֆլիկտները հեշտությամբ վերածվում են իշխանության խնդրի. ում ձեռքին իշխանությունն է, նա էլ գործում է իր հայեցողությամբ»: Այս մտայնությունը Գերմանիայում չի հաղթահարվում, որի հետևանքները երևան են գալիս 1918 և 1945 թթ.:

Կայզերական Գերմանիայի «ուժային քաղաքականությունը» և նրա ակունքները նկարագրված են նաև Սերգեյ Բուլգակովի «Մարդկայնությունը մարդաստվածությանը հակառակ» (1917) հոդվածում. «Գերմանիան ուզում էր դառնալ մարդկության հոգևոր խնամակալը, ընդ որում՝ իր հավակնությունները պահպանում էր թրով: Նրա իմպերիալիստական մտահղացումները գնում են Հռոմից էլ առաջ, քանի որ Հռոմը միայն տարածում էր հռոմեական արծիվն ու իրավազորությունը, բայց ոտնձգություն չէր անում նվաճվող ցեղերի հոգևոր ինքնությունների դեմ»[35]: Այս հիմնավորված դիտարկումները էլ ավելի տեսանելի են դառնում հատկապես Երրորդ ռայխի գաղափարախոսության մեջ: Սա պայմանավորված էր նրանով, որ գերմանական մշակույթը վեր էր դասվում մյուս մշակույթներից, իսկ գերմանացիները՝ այլ ազգերից: Մշակութային և ազգային մեծամտությունը դրսևորելու համար անհրաժեշտ էր այլ ազգերին նվաճել զենքի, տեխնոլոգիաների միջոցով: Նման փորձ կատարվեց երկու անգամ և երկու դեպքում էլ ձախողվեց:

Հետաքրքրական է, որ Թ. Մանը «Մշակույթ և սոցիալիզմ» (“Kultur und Sozialismus”, 1928) իր ծրագրային հոդվածում գրում է, որ Լյութերը, Գյոթեն, Շոպենհաուերը, Ստեֆան Գեորգեն դեմոկրատներ չէին, նրանք են ստեղծում մեծատառով Մշակույթ գաղափարը, ինչն էլ դառնում է գերմանական ռազմական գաղափարախոսության առանցքը[36]: Ստացվում է, որ կայզերական Գերմանիայի քաղաքական էլիտան օգտագործում էր գերմանական մշակույթը (մշակութային դաշտը) նվաճողական արտաքին քաղաքականությունը (քաղաքական դաշտը) իրականացնելու համար: Դա է պատճառը, որ գերմանական մշակույթը ստանում է կրոնականին մոտ (“religionsnahen Charakter”) բնույթ, քանի որ «մշակույթ» հասկացության մեջ մտնում են «հրաշալիության ու միստիկականության տարրեր» (“ein Element des Wunderartigen und Mystischen”)[37]: Եթե զարգացնելու լինենք Թ. Մանի այս խորը դիտարկումը, ապա կարող ենք ասել, որ 1933 թ. հետո նացիստական քաղաքականության գեղագիտականացումը և վարդապետության սրբացումը կարելի է համարել ընդամենը շեշտադրման փոփոխության հետևանք[38]:

Ст. “Политика с позиции силы” // http://bibliotekar.ru/encSlov/ 15/126.htm-26.02.2014)

[35] **Булгаков С**. Человечность против человекобожия. Историческое оправдание англо-русского сближения // "Русская мысль", 1917, № 6, с. 14.

[36] Տե՛ս **Mann, Thomas**. Von Deutscher Republik. Politische Schriften und Reden in Deutschland, էջ 264:

[37] Նույն տեղում, էջ 264:

[38] Այս մասին մանրամասն (տե՛ս **Симян Т.** Религиозность нацизма и эстетизация нацистской политики (семиотический аспект) // "Критика и семиотика", 2012, № 16, с. 95–105 // http://www.nsu.ru/education/virtual/cs016content.htm- 26.06.2014)

Եթե դիտարկենք Ֆերդինանտ Տյոնիսի այն միտքը, որ Վայմարյան Հանրապետության տարիները հնարավորություն չեն տալիս ամուր ժողովրդավարություն կառուցելու. ամուր չէին սոցիալ-տնտեսական, քաղաքական հիմքերը ամուր ժողովրդավարական «հասարակություն» (“Gesellschaft”) կերտելու համար: Մի առիթով Թ. Մանը նկատում է. «Հանրապետական կառավարման ձևի ներմուծումը չի «դեմոկրատացնում» Գերմանիան»[39]:

Առաջին համաշխարհային պատերազմում «ժողովրդավարական քաղաքակրթությունից» Գերմանիայի պարտությունը խարխլում է նաև գերմանական ռազմամոլության հիմքը՝ քաղաքական դաշտի կողմից ստրկացված գերմանական մշակույթը: Այլ խոսքով ասած՝ քանդվում է գերմանականության «մենքը», ինչն արդեն սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններում Վայմարյան Հանրապետության (1918-1933) «ծոցում» նորագույն քարոզչական տեխնոլոգիաների շնորհիվ վերածնվում է նոր տիպի «համայնքի»՝ «ազգային համայնքի» (“Volksgemeinschaft”): Երրորդ ռայխի (1933-1945) ընթացքում նացիստական քարոզչության նպատակը ազգը միավորելը, «ազգային համայնք» կերտելն էր, ինչը ստանում է էլ ավելի բարդ կազմակերպական ձև (հիտլերյուգենդ → SS, SA / NSDAP): Վ. Բենիամինը նկատում է, որ «ազգային համայնքի» կերտման գործում 1919 թ.-ից մեծ տեղ էր հատկացվում Գերմանիայի պարտությանը, որը քաղաքական ընտրախավը «օգտագործում է իր գերմանականությունը հաստատելու համար»[40]:

Ստացվում է, որ պարտությունը օգտագործվում է նոր «մենք» կառուցելու համար: Դա է պատճառը, որ առաջին փուլում քաղաքական ընտրախավը այն ներկայացնում է որպես «բարոյական հաղթանակ», այնուհետև՝ «փորձում մոռացության մատնել»[41]: Այս երկրորդ փուլին ակտիվ պատասխանում է վիպական խոսույթը՝ ի դեմս Ռեմարկի վեպերի («Արևմտյան ռազմաճակատում անփոփոխ է», «Վերադարձ» և այլն): Իսկ երրորդ փուլը, ըստ Բենիամինի, այն է՝ «Պատերազմի պարտության միտումը ընդունելը ավելի կարևոր է, քան պատերազմը»[42]: Ինչպես նկատում ենք, այս երրորդ փուլը արդեն լավ հենք է նախապատրաստում՝ հասարակական գիտակցության մեջ ռևանշիստական տրամադրություններ սերմանելու համար:

Այժմ տեսնենք, թե Թ. Մանը ինչ դեր էր հատկացնում գրականությանը:

«Ապաքաղաքական անձի մտորումները» երկում Թ. Մանը գրականությունը համարում է իր կեցության մասը, քանի որ «գրականությունը նույն բանն է, ինչ ժողովրդավարությունը և քաղաքակրթությունը»: Ստացվում է, որ «...իմ գրական գործունեությամբ, - գրում է Թ. Մանը, - իմ ծայրահեղու-

---

[39] **Mann, Thomas**. Von Deutscher Republik. Politische Schriften und Reden in Deutschland, s. 264.

[40] **Беньямин В**. Теории немецкого фашизма (О сборнике Эрнста Юнгера “Война и воины”) // **Беньямин В**. Маски времени. Эссе о культуре и литературе. СПб., 2004, с. 365.

[41] Նույն տեղում, էջ 365:

[42] Նույն տեղում:

թյամբ օգնում էի Գերմանիայի «առաջընթացին» միաժամանակ նրանով, որ ես փորձում էի հենց այդ առաջընթացը իր պահպանողական կողմով կանգնեցնե՞լ»[43]:

Գրականության հարցում Թ. Մանի սխալը մենք տեսնում ենք այն կետում, երբ նա թյուրիմացաբար կարծում է, թե կրավորական գրական գործունեությամբ, պահպանողական հեգնանքով («Հեգնողը պահպանողական է») կարող է ապահովել առաջընթացը: Իրականում դա հնարավոր չէ, քանի որ գրական և քաղաքական դաշտերը հավասարաժեք չեն: Քաղաքական դաշտը հատկապես ամբողջատիրական և ավտորիտար վարչակարգերի կառավարման ժամանակ միշտ բռնատիրում է մյուս դաշտերը[44] (գիտության դաշտը, տնտեսական դաշտը, գրական դաշտը): Այս առիթով խիստ հետաքրքրական է Թ. Մանի «Լոթեն Վայմարում» վեպում տեղ գտած Գյոթեի՝ Շարլոտտե-Ավգուստ երկխոսությունը. «Քաղաքականությունը մեկուսացված չէ, այլ հարյուրավոր թելերով անբաժանելի ու ամբողջապես կապված է համոզմունքների, հավատքի, կամքի հետ: Այն ամենուր է և ամեն ինչի հետ է կապված, տեսանելի է միայն հոգևորի ու փիլիսոփայականի՝ բարոյականության ու գեղագիտականի մեջ: Երջանիկ են այն ժամանակները, երբ գտնվում են չգիտակցված անմեղության մեջ, երբ ոչինչ չի խոսվում, երբ ոչ ոք, բացի քաղաքական նեղ ադեպտներից, չի խոսում իր լեզվով: Այսպիսի թվացող ապաքաղաքական ժամանակահատվածում, որը ես կանվանեի թաքնված քաղաքական ժամանակաշրջան, հնարավոր է՝ գեղեցիկը ազատ ու անկախ լինի քաղաքականությունից, խաղաղ ու անքակտելի, փոխադարձ համերաշխության մեջ լինի նրա հետ: Դժբախտաբար նման բախտ մենք չունենք՝ հանգիստ ու հանդուրժող ժամանակներում ապրելու համար: Մերը լուսավորված է ահավոր ուժեղ լույսով, և ցանկացած առարկայում, ցանկացած մարդկային գծերում, ցանկացած գեղեցկության մեջ դրսևորվում են տվյալ քաղաքականության էական կողմերը: Ես չեմ բացառում, որ դրանից բխում են բավականին ցավ ու կուրուստ, դառը բաժանումներ»[45]:

Բերված մտքից հետևում է, որ երջանիկ ու խաղաղ կեցության պայմանները ձևավորվում են այն ժամանակ, երբ քաղաքական դաշտը ուղղակիորեն չի ազդում մյուս դաշտերի վրա: Դա է պատճառը, որ Թ. Մանը այդպիսի ժամանակաշրջանը անվանում է «թաքնված քաղաքական ժամանակաշրջան»:

Այժմ տեսնենք, թե ինչպես է փոփոխվում Թ. Մանի դիրքորոշումը:

Թ. Մանը իր հայացքները վերանայում է Վայմարյան Հանրապետության արտաքին գործերի նախարար, պացիֆիստ, ազգությամբ հրեա Վալտեր Ռատենաուի (1867-1922) սպանությունից հետո: Եվ մեկ տարի անց Թ. Մանը «Գերմանական Հանրապետության մասին» (“Von Deutscher

[43] **Mann, Thomas**. Betrachtungen eines Unpolitischen, s. 40.

[44] Այս խնդրի մասին մանրամասն տե՛ս օրինակ՝ **Бурдье П.** Поле литературы // "НЛО", № 45, 2000, էջ 22-87 / http://bourdieu.name/content/burde-pole-literatury - 26.02.2014

[45] **Mann, Thomas**. Lotte in Weimar, Frankfurt am Main: Fischer Taschenbuch Verlag, 1967, s. 181.

Republik", 1923) հոդվածում արդեն քննադատում է գերմանական ազգայնականությունը[46]: Վերանայվում են «Ապաքաղաքական մտորումները» գրքում տեղ գտած գերմանականության գաղափարները «Կախարդական լեռը» (1924) վեպում, ինչպես նաև՝ «Մշակույթ և սոցիալիզմ» (Kultur und Sozialismus, 1929), «Մշակույթ և քաղաքականություն» (Kultur und Politik, 1939) հոդվածներում:

Օրինակ, Թ. Մանը «Մշակույթ և սոցիալիզմ» հոդվածում, «Ապաքաղաքական անձի մտորումները» համարում է «երկար, խորը և ցավալի խնդրով տարվելու արդյունք, որն այն ժամանակ ամենաանձնական, կենսական ու արդիական խնդիրներից էր, գերմանականության խնդիր...»[47] (das Problem des Deutschentums): Եթե այս հոդվածում Թ. Մանը իր ուսումնասիրությունը դիտարկում է արդիականության և «ամենաանձնականի» (allepersönlichsten) տիրույթում, ապա արդեն տասը տարի անց հեղինակը Պրինստոնի համալսարանում ուսանողների համար կարդացած իր ««Կախարդական լեռը» վեպի ներածություն» (Einführung in den "Zauberberg", 1939) զեկուցման մեջ նշում է, որ «Ապաքաղաքական անձի մտորումները» «եվրոպական հակասությունների ("europäische Gegensätze") և վիճելի խնդիրների վերապրման ու ինքնաքննության հոգնեցնող, ծանր ստեղծագործություն էր»[48]: Սակայն նույն հոդվածում նշվում է նաև, որ այս ստեղծագործությունը «սեփական կյանքի, ինչպես նաև ժամանակի փաստաթուղթ է»[49]: Գիրքը նույնիսկ համարում է «դեմոկրատական-գերմանատյաց նյարդայնացնող քարոզչության ազդեցության հետևանք»[50] (das Reizungsprodukt einer demokratisch-deutschfeindlichen Tugendpropaganda):

«Իմ ժամանակները» (Meine Zeit, 1950) ինքնակենսագրական էսսեում «Ապաքաղաքականացված անձի մտորումները» արդեն համարում է «ոչ այնքան քաղաքական մանիֆեստ, որքան փորձարարական, դաստիարակիչ վեպ: Հոգեբանական տեսանկյունից բանավիճային ձևի մեջ պահպանողական-ազգայնական ոլորտի երկար մի ուսումնասիրություն է՝ առանց վերջնական եզրակացությունների հանգեցնելու մտադրությամբ»[51]: Մեջբերված հատվածները կարելի է ընկալել որպես սեփական պահվածքը մեկնաբանելու, բացատրելու փորձեր: Օրինակ՝ «Ապաքաղաքականացված անձի մտորումները» «փորձարարական, դաստիարակիչ վեպ» (Experimental- und Bildungsroman) համարելը պայմանավորված է այն փաստով, որ այս ստեղծագործությունը Մանը դիտարկում է «Կախարդական լեռը» վեպի համատեքստում: Եթե առաջին «վեպը» կրթում է իրեն, ապա երկրորդը՝ «Կախարդական լեռը», կրթում է կայզերական Գերմանիայի հասարակությունը կամ պարզապես շարժառիթ է կայզերական Գերմանիայի վարած քաղաքականության վերանայման համար:

---

[46] Տե՛ս **Mann, Thomas**. Von Deutscher Republik, էջ 118-159:

[47] Նույն տեղում, էջ 260:

[48] **Mann, Thomas**. Rede und Antwort (Hrsg. Peter de Mendelssohn), Frankfurt am Main: S. Fischer Verlag 1984, s. 72.

[49] **Mann, Thomas**. Von Deutscher Republik, s. 259.

[50] Նույն տեղում, էջ 259:

[51] **Mann, Thomas**. Über mich selbst. Autobiographische Schriften (Hrsg. Peter de Mendelssohn), Frankfurt am Main: S. Fischer Verlag, 1983 s. 16-17.

Պահվածքի շրջադարձի առումով կարևոր ենք համարում «Մշակույթ և սոցիալիզմ» հոդվածում Թ. Մանի պատասխանը այն մեղադրանքին, թե իբր ինքը «նենգափոխել» է իր «Ապաքաղաքական անձի մտորումները» ստեղծագործությունը՝ «հակադեմոկրատական պամֆլետը գաղտնի կերպով վերածելով դեմոկրատական տրակտատի»: «Ես չեմ ուրանում «Ապաքաղաքական անձի մտորումները», - գրում է Մանը, - և չեմ ուրանում ոչ մի գրած բառ…»[52]: Եվ երկրորդ՝ մեզ համար կարևոր շրջադարձային պնդումը կարդում ենք Թ. Մանի «Մշակույթ և քաղաքականություն» հոդվածում. «Ապաքաղաքականությունը այսօր նշանակում է ուղղակի հակաժողովրդավարություն»[53]: Այս գաղափարին Թ. Մանը հասնում է, իր իսկ պնդումով, «ինքնավերլուծության» միջոցով. «…եթե զբաղվել ինքնավերլուծությամբ բավականին հիմնովին, ապա դա սովորաբար առաջին քայլն է փոփոխության, և ես իմացա, որ ինքնաճանաչվելով ոչ ոք ամբողջովին չի մնում այնպիսին, ինչպիսին կար»[54]:

Փաստորեն, ինքնաճանաչման և դրանից բխող արժեքային փոփոխության հետևանքով Թ. Մանը զինվորագրվում է քաղաքական դաշտից եկող հասարակական վտանգին ակտիվ դիմակայելու որոշմանը: Այս ամենի շնորհիվ 1930-ական թթ. նա արդեն բացեիբաց քննադատում է նացիստական ամբողջատիրական վարչակարգը: Թ. Մանը «մշակութային աղետի» հարցում նույնիսկ անմիջական կապ է տեսնում Գերմանիայի բյուրգերների ապաքաղաքականացվածության և նացիոնալ-սոցիալիստների վարած քաղաքականության միջև:

1930 թ. Թ. Մանը ստորագրում է հակապատերազմական մանիֆեստը և գրում ու ելույթ ունենում («Գերմանական ուղերձ. Կոչ բանականությանը» (1930), «Ուշադրություն, Եվրոպա» (1935), «1939 թ. մայիսի 8-ի ելույթը Նյու Յորքում գրողների համաշխարհային կոնգրեսում» (1939), «Եղբայր Հիտլերը» (1939), «Ճակատագիր և խնդիր» (1943), «Գերմանիան և գերմանացիները» (1945)): Նացիզմը քննադատության է արժանացել նաև նրա «Դոկտոր Ֆաուստուս» (1947) վեպում:

Այսպիսով, վերը շարադրվածից կարող ենք եզրակացնել, որ Թ. Մանը կարողանում է դառնալ տվյալ ժամանակաշրջանի «կենտրոնական» պացիֆիստներից մեկը: Թ. Մանը ինքնաքննության, ինքնավերանայման, սեփական հայացքների վերաարժևորման ճանապարհով կարողանում է ազգայնական արժեքներից, «մենք»-ի նեղ գիտակցումից անցում կատարել *ինտելեկտուալ-տեր* մոդելին, զինվորագրվել ու գործուն պայքարել 1930-ականներին Գերմանիայում հասունացող նոր ազգայնական չարիքի դեմ:

Բանալի բառեր – *պացիֆիզմ, հակապացիֆիզմ, մտավորականի պահվածք (Habitus), արժեքաբանական պայքար, «Ապաքաղաքականի մտորումները»*

ТИГРАН СИМЯН – *Отклонение габитуса (на примере Томаса Манна).* – В статье рассматривается антимилитаристский дискурс 1910-х гг. на примере “Размышлений аполитичного” Томаса Манна. Особое место уделяется анализу

[52] **Mann, Thomas**. Von Deutscher Republik, s. 259.
[53] **Манн Т**. Художник и общество: статьи и письма, М., 1986, с. 72.
[54] Նույն տեղում, էջ 70:

таких его оппозиций, как дух–политика, культура–цивилизация, душа–общество, искусство–литература, космополитизм–интернационализм. В этой связи речь идёт также о статьях русских мыслителей Владимира Эрна и Сергея Булгакова. После убийства министра иностранных дел Германии Вальтера Ратенау (1923) Томас Манн пересмотрел свои политические взгляды и решительно встал на позиции пацифизма. Эта переоценка ценностей писателя прослеживается на примере таких его докладов, эссе и статей, как, например, “Моё время” и “Культура и политика”.

Ключевые слова: *пацифизм, милитаризм, поведение интеллектуала, аксиологическая война, “Размышления аполитичного”*

TIGRAN SIMYAN – ***Deviation from Habitus (on the example of Thomas Mann).*** – This article focuses on antimilitaristic discourse studies based on the example of the "Reflections of a Nonpolitical Man" by T. Mann. Particular attention is paid to the analysis of such oppositions used by the author as spirit / politics, culture / civilization, soul / society, arts / literature, cosmopolitanism / internationalism, German spiritual values, humanity / bourgeois democrat, etc. The author of the article also critically analyzes the articles of such Russian thinkers as Vladimir Ern and Sergei Bulgakov. After the assassination of the Foreign Minister Walter Rathenau (1923), Thomas Mann rethought his own political views and became an ardent pacifist. In the article the axiological "revolution" of Mann’s ideas is demonstrated on the basis of a few examples of his reports, essays and articles ("My Time", "Culture and Politics", etc.).

Key words: *pacifism, militarism, habitus of intellectual, axiological war, "Reflections of an Unpolitical Man"*